

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**ԲՀ-ՇՀԱՊՁԲ-17-15/1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում
կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

գ.Բուժական

5 ապրիլի 2017թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.Ավետիսյան

Հանձնաժողովի անդամներ՝

Մ.Սողոմոնյան, Ս.Բաղդասարյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Է.Գրիգորյան:

1. ԲՀ-ՇՀԱՊՁԲ-17-15/1 ծածկագրով հայտերի բացման մասին

(Ա.Ավետիսյան)

1. ՀՀ Կառավարության 168-Ն որոշմամբ սահմանված կարգով 2017 թվականի մարտի 27-ին ծանուցվել են «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած և տվյալ պահին որպես հնարավոր մասնակից գրանցված ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1 ծածկագրերով շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր կազմակերպություններին, ինչպես նաև սահմանված կարգով հրապարակվել է նաև www.gnumner.am կայքում:

2. Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

1.	<<Ֆլեշ>> ՍՊԸ	ք.Երևան, Ե.Կողբացու 30, հեռ. 010 53 42 33
2.	<<Մաքսիմոր>> ՍՊԸ	ք.Երևան, Տպագրիչների 8, հեռ. 010 52 67 51

Սույն թվականի ապրիլի 5-ի դրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած և տվյալ պահին որպես հնարավոր մասնակից գրանցված ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1 ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած մնացած կազմակերպությունները հայտեր չեն ներկայացրել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի հայտ պարունակող ծրարի բացման մասին

(Ա.Ավետիսյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված և ներկայացված են հրավերով սահմանված կարգով:

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում Հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են և կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կարգով:

Մասնակիցների կողմից առաջարկված գինը հետևյալն են ներկայացված են առանց ԱԱՀ՝

<< դրամ

Զ/Հ	Գնման առարկայի անվանումը	<<Ֆլեշ>> ՍՊԸ	<<Մաքսիմոր>> ՍՊԸ	Նախահաշվային գներ
1	Դիզելային վառելիք	1 615 250	1 475 877	1 500 000
2	Բենզին ռեգուլյար	901 875	842 887.5	816 666.666

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0: